ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ՊԱՌԱՎԱՔԱՐ համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

22 – ը հունվարի 2016 թ. թիվ 1 – Ն

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 – րդ հոդվածի 3 – րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32 – րդ հոդվածի պահանջներով, Պառավաքար համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հաստատել 2016 թվականի համայնքի բյուջեն՝

   ա/ եկամուտների գծով 35104.7 ---- հազար դրամ

   բ/ ծախսերի գծով 41554.1 ---- հազար դրամ

   գ/ դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ 6449.4 ---- հազար դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հատված 1):
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հատված 2):
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 3):
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասորդը)՝ (հատված 4):
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասորդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ (հատված 5):
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 6):
8. Սահմանել, որ

   ա/ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

   բ/ թույլատրել համայնքի ղեկավարին գանձապետական հաշվի 2015 թվականի տարեվերջյան ազատ նմացորդն ինքնուրույն ներառել 2016 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար:

   գ/ ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգման նախատեսված հոդվածների միջև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 33 – րդ հոդվածի 3 – րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15 - %ը:

Համայնքի ղեկավար՝ / Ռ. Մարգարյան